Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
հուլիսի 31-ի N 1067 - Ա որոշման

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԽՈՋԱԲՈՒԾԱՐԱՆԻ ՀԻՄՆՄԱՆ

Ներդրումային ծրագրի նկարագիր

Սույն ներդրումային ծրագիրը նախատեսում է 110 կգ կենդանի քաշով ապրանքային խոզերի արտադրություն: **Ներդրումային ծրագրի թողարկումը՝ ամբողջական հզորության անցնելու դեպքում, թույլ կտա տարեկան արտադրել 2280 տոննա կենդանի քաշով խոզի միս**:

Ներդրումային ծրագրի հաշվարկի համար վերցված արտադրական ցուցանիշները հիմնված են արտադրության այնպիսի ցուցանիշների վրա, որոնք կարող է տալ արդյունաբերական խաչասերման միջոցով լանդրաս, պետրեն և դյուրոկ ցեղատեսակների խոզերի բուծումը:

Խոզաբուծարանի հիմնման սույն ներդրումային ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Մայիսյան, Այգեգործական 4-րդ թաղամասի 12-րդ փողոց, 2 և 6 հասցեներում (կադաստրային ծածկագրեր՝ 04-043-0963-0001, 04-043-0962-0003) «ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող տարածքներում և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականությունը հանդիսացող՝ գյուղ Մայիսյան, Այգեգործական 4-րդ թաղամասի 12-րդ փողոց, 8 հասցեում գտնվող 0.5774 հա (կադաստրային ծածկագիր՝ 04-043-0964-0001), գյուղ Մայիսյան, Այգեգործական 4-րդ թաղամասի 12-րդ փողոց, 4 հողամաս հասցեում գտնվող 4.5769 հա (կադաստրային ծածկագիր՝ 04-043-1004-0001) և գյուղ Մայիսյան հասցեում գտնվող 10 հա (կադաստրային ծածկագիր՝ 04-043-1003-0009) հողամասերում:

Ներդրումային ծրագրի ամբողջ ծավալը կազմում է 2 091 192 203 (երկու միլիարդ ինսունմեկ միլիոն հարյուր ինսուներկու հազար երկու հարյուր երեք) դրամ, որից 30.06.2025 թվականի դրությամբ «ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Մայիսյան, Այգեգործական 4-րդ թաղամասի 12-րդ փողոց, 2 և 6 հասցեներում (կադաստրային ծածկագրեր՝ 04-043-0963-0001, 04-043-0962-0003) ամբողջ ծրագրի շրջանակում արդեն կատարվել է 862 522 633,23 (ութ հարյուր վաթսուներկու միլիոն

հինգ հարյուր քսաներկու հազար վեց հարյուր երեսուներեք ամբողջ քսաներեք) դրամ ներդրում հետևյալ ուղղություններով՝

- հողատարածքների ձեռքբերում,
- շինանյութերի ձեռքբերում,
- խոզաբուծարանի սարքավորումների ձեռքբերում,
- շինարարական աշխատանքներ,
- հորատանցքի հորատման ծախսեր,
- թույլտվությունների և փորձաքննությունների ստացման հետ կապված ծախսեր:

Տվյալ հողատարածքների վրա «ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը նախատեսում է իրականացնել ևս 798 669 569,77 (յոթ հարյուր ինսունութ միլիոն վեց հարյուր վաթսունինը հազար հինգ հարյուր վաթսունինը ամբողջ յոթանասունյոթ) դրամ ներդրում հետևյալ ուղղություններով՝

- կերի արտադրամասի սարքավորումների և բունկերների ձեռքբերում,
- խոզաբուծարանի սարքավորումների ձեռքբերում,
- մեքենաների ձեռքբերում,
- մայրական հոտի ձեռքբերում,
- շինարարական աշխատանքներ:

Ձեռք բերվող՝ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղ Մայիսյան, Այգեգործական 4-րդ թաղամասի 12-րդ փողոց, 8 հասցեում գտնվող 0.5774 հա (կադաստրային ծածկագիր՝ 04-043-0964-0001), գյուղ Մայիսյան, Այգեգործական 4-րդ թաղամասի 12-րդ փողոց, 4 հողամաս հասցեում գտնվող 4.5769 հա (կադաստրային ծածկագիր՝ 04-043-1004-0001) և գյուղ Մայիսյան հասցեում գտնվող 10 հա (կադաստրային ծածկագիր՝ 04-043-1003-0009) հողամասերում կատարվելու է 430 000 000 (չորս հարյուր երեսուն միլիոն) դրամ ներդրում:

Այգեգործական 4-րդ թաղամասի 12-րդ փողոց, 8 հասցեում գտնվող 0.5774 հա (կադաստրային ծածկագիր՝ 04-043-0964-0001) հողատարածքում նախատեսվում է կառուցել խոզերի բտման երկու մասնաշենք, Այգեգործական 4-րդ թաղամասի 12-րդ փողոց, 4 հասցեում գտնվող 4.5769 հա (կադաստրային ծածկագիր՝ 04-043-1004-0001)

հողամասի վրա՝ գոմաղբի կուտակման հորեր, գյուղ Մայիսյան հասցեում գտնվող 10 հա (կադաստրային ծածկագիր՝ 04-043-1003-0009) հողամասում (անօրինական աղբավայր) նախատեսվում է իրականացնել վերամշակված գոմաղբով հողի բարելավում (ռեկուլտիվացիա), իսկ հետագայում օգտագործվելու է գյուղատնտեսական կամ այլ նպատակներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ